Ս.ՇՏԻԿՅԱՆ

ԿՀԵՏԱՔՐՔՐԻ՞, ԱՐԴՅՈՔ, ՀՆԱԳԵՏՆԵՐԻՆ, ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻՆ

Խոսքը վերաբերում է առ այսօր անհայտ մի արձանագրության, որը մի լրացուցիչ ու կարևոր փաստ է բացահայտում, կապված Սևանի Սուրբ Կարապետ եկեղեցու պատմության հետ: Արձանագրությունը գտնվում է վերոհիշյալ եկեղեցու կենտրոնական մուտքի աջ և ներսի կողմում, մուտքի կամարի կորության վրա: Փորագրված է գրեթե քառակուսու չափեր ունեցող (37x38) վարդագույն տուֆի վրա: Արձանագրությունը դժվար ընթեռնելի է թե՛ գրության՝ տեխնիկապես վատորակ լինելու, և թե՛ տառերի կատարյալ անհամաչափության պատճառով: Գրվածքը հետագայում կամեցել են ջնջել (քարի վրա պարզորոշ երևում է խազմզելով ջնջել փորձելու հետքերը), ապա ծածկել են շաղախով, և հետևաբար, այդ պատճառով էլ վրիպել է մասնագետների աչքերից: Արձանագրությունը, որը մեզ հաջողվեց վերծանել, ունի հետևյալ բովանդակությունը.

Ես Սարգիս ծա

ռայ քի շեն

եցի զեկեղեց

իս որ աստ էրիսս

Զիս յաղաւթոյ

իշիցեք.

ՅԾԲ

Եթե չմոռանանք, որ արձանագրությունը գրվել է 903 թվականին (ՅԾԲ=352+551=903), այսինքն՝ Ս.Կարապետ եկեղեցու կառուցումից (874 թ.) քսանինը տարի հետո, ապա կարելի կլինի պնդել, որ տվյալ դեպքում մենք գործ ունենք Ս.Կարապետ եկեղեցուն վերաբերող ամենահին արձանագրության հետ, և որն, այս տեսակետից, եզակի արժեք է ներկայացնում: Արձանագրությունից բխող մյուս կարևոր եզրակացությունները թողնում ենք մասնագետներին:

Սևանի մյուս՝ Սուրբ Առաքելոց եկեղեցու արևմտյան կողմում, ուր կատարվում են որոշ վերականգնողական աշխատանքներ, մեր ուշադրությունը գրավեց մի հողաթումբ, որի «պեղմամբ» էլ սկսեցինք զբաղվել ազատ ժամերին: Հեշտ է պատկերացնել մեր ոգևորությունը, երբ շուտով երևան եկավ կոկիկ հղկած բազալտե մի տապանաքար, 60x1,75 չափսերով, որը չորս կողմից երիզված էր նախշագծով: Տապանաքարի վրա պարզորոշ կարդացվում է. «Այս է հանգիստ պարոն Քուրդա» մակագրությունը: Մակագրությունն անավարտ է, այդ է վկայում «Քուրդա» բառից հետո եղած դատարկ տարածությունը և հաջորդ տողում «միայնակ» մնացած «ր» տառը:

Սակայն նույնիսկ այս դեպքում կասկածից վեր է, որ գտնվել է իշխանաց իշխան պարոն Քուրդի (հայտնի է նաև՝ Քուրդ ամիրա հորջորջմամբ) գերեզմանը, այն պարոն Քուրդի, որը 1176 թվականին վերանորոգել է տվել Առաքելոց եկեղեցու արևմտյան մուտքի (ներկայումս՝ փակ) փայտյա դուռը, և այդ մասին էլ մակագրություն է թողել հիշյալ դռան վրա։ Սրանից ելնելով՝ որոշակի է դառնում, թե որտեղ է թաղվել Քուրդը, որովհետև գրեթե տեսության ուժ է ստացել այն տեսակետը, որ նա իր կյանքի վերջին տարիներին թողեց-հեռացավ Հայաստանից։

Վերևում բոլոր ասվածից բխում է մեկ և որոշակի եզրակացություն, որը դեռ անցյալ դարի 50-ական թվականներին իրեն հատուկ կրքով առաջ քաշեց Հովհաննես Շահխաթունյանցը, այն է՝ «պետք է հնագետ և բանագետ անձինք Սևանա կղզում սկսեն պեղումներ, որոնց անհրաժեշտությունը որևէ տարակույս չի վերցնում»։

Չի՞ հետաքրքրի այս ամենը մեր հնագետներին ու պատմաբաններին։

Երևան, 1967, № 185